ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 ապրիլի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

39
(3248)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

600 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԱՆՈՑ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 14-ը ուշագրավ օր է Արմեն Գրիգորյանի ղեկավարած Ստեփանավանի համայնքապետարանի գործունեության մեջ: Նույն օրը կնքվել են երկու պայմանագրեր, որոնք առաջին հայացքից վերաբերում են նույն ծրագրին՝ Չայկովսկու եւ Մյասնիկյան փողոցների հիմնանորոգման նախագծային գործընթացին, սակայն դրանց ֆինանսական հարաբերակցությունը հարցեր է առաջացնում: Մասնավորապես՝

- նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայության համար ծախսվել է 259,999 դրամ,
- նույն փաստաթղթերի մշակման եւ կազմման խորհրդատվական ծառայության համար՝ 600,000 դրամ:

Թվերի համադրությունը ենթադրում է ակնհայտ անհամաչափություն. խորհրդատվությունը գնահատվել է ավելի քան կրկնակի թանկ, քան փորձաքննությունը, որը, մասնագիտական տեսանկյունից, հաճախ ենթադրում է ոչ պակաս բարդ եւ պատասխանատու աշխատանք:

Հատկանշական է, որ երկու ծառայություններն էլ վերաբերում են նույն ենթակառուցվածքային նախագծին՝ Չայկովսկու եւ Մյասնիկյան փողոցների հիմնանորոգմանը, ինչը ենթադրում է միասնական տեխնիկական շղթա: Այդ պարագայում տրամաբանական հարց է առաջանում՝ ինչ մեթոդաբանությամբ կամ հիմնավորմամբ է խորհրդատվական բաղադրիչը արժեւորվել զգալիորեն բարձր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի դեմ Նաիրի Սարգսյանի ներկայացրած՝ «զրպարտության» բովանդակությամբ հայցը մերժվել է նաեւ վերաքննիչ դատարանում: Այսպիսով, ուժի մեջ է մնացել «Ժողովուրդ» օրաթերթի օգտին կայացված դատական ակտը, եւ մենք հաղթեցինք: Գործը վերաբերում էր «Ժողովուրդ» օրաթերթի այն հրապարակմանը, որտեղ ներկայացվել էին տեղեկություններ, ըստ որոնց՝ վարչապետի նախկին օգնական Նաիրի Սարգսյանն իր նախկին իշխանական կապերն օգտագործել է իր գործատու GTB-ի շահերը սպասարկելու եւ դրա գործերն առաջ տանելու համար: Հրապարակման մեջ անդրադարձ էր եղել նաեւ պատերազմի օրերին շրջանառված տվյալներին՝ զրահաբաճկոնների գնման, դրանց գնի եւ բյուջեից կանխիկ դուրս գրված միջոցների վերաբերյալ: Մասնավորապես, հրապարակվել էր, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Նաիրի Սարգսյանին լիազորվել էր ձեռք բերել 5 միլիոն ԱՄՆ դոլարի զրահաբաճկոններ, եւ կանխիկ եղանակով գնվել էր 3000 զրահաբաճկոն, որոնց համար պետբյուջեից տրամադրվել էր 720 հազար ԱՄՆ դոլար: Ըստ նույն տվյալների՝ յուրաքանչյուր բաճկոնի արժեքը կազմել էր 240 դոլար, ինչը շուկայականից էականորեն բարձր գին էր: Ավելին, բյուջեից դուրս գրված կանխիկ գումարը ձեւակերպվել էր հենց Նաիրի Սարգսյանի անունով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Չարենցավանի դատարանում խառնաշփոթ իրավիճակ է ստեղծվել: ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբոր թոռան՝ Սարգիս Ջեյնալյանի սպանության գործով դատական նիստի ընթացքում տուժող եւ մեղադրյալ կողմերի միջեւ ծեծկռտուք է սկսվել: Դրա հետեւանքով վիրավորվել են նաեւ դատական կարգադրիչները: Նրանցից մեկը գլխի հատվածում վնասվածք է ստացել: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դատական նիստի ժամանակ ծեծկռտուք է տեղի ունեցել ամբաստանյալի եւ տուժող կողմի հարազատների միջեւ, որը վերածվել է իսկական մարտի, որի ժամանակ կոտրվել է դատարանի գույքը, տուժել են նաեւ դատական կարգադրիչներ, որոնցից մի քանիսը մարմնական վնասվածքներ են ստացել: Դատարան են ժամանել մեծ թվով իրավապահներ: Լարված իրավիճակը պահպանվել է, եւ միայն կարգադրիչների գործողությունների արդյունքում է, որ ծանր հետեւանքներ չեն եղել, քանի որ ըստ օպերատիվ տեղեկությունների՝ նրանց մեջ եղել են նաեւ դանակներով զինված քաղաքացիներ:

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Այս մասին տեղեկանում ենք դատախազությունից: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ ՊՆ N բանակային կորպուսի նախկին հրամանատար, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) միացյալ շտաբի պետի նախկին տեղակալ Հայկազ Պապիկի Բաղմանյանից եւ նրա հետ փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝ 7 անշարժ գույք, որից 6-ը՝ Երեւան քաղաքում, իսկ 1-ը՝ Կոտայքի մարզում, 4 տրանսպորտային միջոց, 5 տրանսպորտային միջոցի շուկայական արժեք, 2 իրավաբանական անձանցում մասնակցություն, շուրջ 1 միլիոն 290 հազար դրամ ավանդ, բանկի 30 հատ պարտատոմս, 1 միլիարդ 544 միլիոն 254 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ, 1 միլիարդ 511 միլիոն 965 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել, 6 միլիոն 363 հազար դրամի չվերադարձված փոխառության պահանջի իրավունք:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍ ՉԷ»

ArmLur.am-ը զրուցել է «Հայկական խորհրդի» նախագահ Արեգ Քոչինյանի հետ:

-Պարոն Քոչինյան, կխնդրեմ նշեք՝ այժմ ինչ փուլում է գտնվում բանակցային գործընթացը, հատկապես այն բանից հետո, երբ ադրբեջանցի փորձագետները վերջին անգամ այցելեցին Հայաստան:

-Խաղաղության կամրջի վերջին հանդիպումը տեղի է ունեցել Հայաստանում, սակայն ոչ Երեւանում, այլ Ծաղկաձորում: Մոտ ապագայում սպասվում է նաեւ մեր պատասխան այցը Ադրբեջան, եւ այժմ գտնվում ենք կազմակերպչական ակտիվ փուլում:

Խոսակցությունները շարունակվում են տարբեր ուղղություններով՝ փորձագիտական, քաղաքացիական հասարակության եւ մեդիա շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն, եթե խոսենք պաշտոնական բանակցային գործընթացի մասին, ապա կարող ենք արձանագրել, որ ներկայումս կա որոշակի դադար:

Դա վերաբերում է երեք հիմնական ուղղություններին՝ խաղաղության համաձայնագրին, սահմանազատման եւ սահմանագծման գործընթացներին, ինչպես նաեւ կոմունիկացիաների ապաշրջափակմանը: Բոլոր երեք ուղղություններով նկատվում է որոշակի դադար, ինչը, իմ կարծիքով, նաեւ օբյեկտիվ պատճառներ ունի:

Հայաստանում փաստացի արդեն սկսվել է ակտիվ նախընտրական շրջան, քաղաքական ուժերն արդեն սկսել են ակտիվ գործընթացներ: Նման մասշտաբի քաղաքական որոշումները, որպես կանոն, նախընտրական փուլում չեն կայացվում. դրանք սովորաբար լինում են ընտրություններից հետո, երբ ձեւավորվում է նոր իշխանություն եւ ստացվում է երկարաժամկետ մանդատ:

Այնուամենայնիվ, ես ամբողջությամբ չէի բացառի, որ մինչեւ ընտրությունները հնարավոր լինեն որոշակի առաջխաղացումներ հայ-ադրբեջանական բանակցային գործընթացում: Դա քիչ հավանական է, բայց բացառել պետք չէ:

-Ի՞նչն է, բացի քարոզարշավից, խանգարում, որ մինչեւ ընտրությունները ստորագրվի խաղաղության պայմանագիրը:

-Առաջին հերթին՝ հենց ընտրությունները: Եթե նայենք զուտ քաղաքական տրամաբանությամբ, ապա դժվար է պատկերացնել, որ երկու երկրներ, որոնք պատրաստվում են ստորագրել իրենց պատմության ամենաբախտորոշ պայմանագրերից մեկը, դա անեն մի փուլում, երբ գործող իշխանություններին մնացել է ընդամենը մի քանի ամիս պաշտոնավարման ժամկետ:

Դրանից բացի, կա նաեւ ադրբեջանական կողմից բարձրաձայնված հարցը՝ Հայաստանի Սահմանադրության վերաբերյալ: Նրանք կարծում են, որ Սահմանադրությունում առկա հղումը Անկախության հռչակագրին կարող է մեկնաբանվել որպես տարածքային պահանջ Ադրբեջանի նկատմամբ:

Ես անձամբ այդ մեկնաբանության հետ համաձայն չեմ, եւ սա ոչ միայն իմ դիրքորոշումն է, այլ նաեւ հիմնված է Սահմանադրական դատարանի մոտեցման վրա: Սակայն փաստ է, որ այս հարցը դարձել է քննարկման առարկա:

Հայաստանի իշխանություններն արդեն հայտարարել են, որ նոր Սահմանադրության նախագիծ է պատրաստվում, եւ ըստ առկա տեղեկությունների՝ այն դրույթը, որը ադրբեջանական կողմը համարում է խոչընդոտ, այլեւս չի լինելու:

-Փաստորեն ստացվում է, որ մենք հրաժարվո՞ւմ ենք որոշ սկզբունքներից:

-Ոչ, պետք է այստեղ շատ հստակ տարբերակել: Անկախության հռչակագիրը Սահմանադրության մաս չէ: Սահմանադրության նախաբանում պարզապես կա հղում դրան: Սա շատ կարեւոր տարբերություն է: Այդ հղումը չի նշանակում, որ հռչակագրում գրված ամբողջ տեքստը Սահմանադրության մաս է կազմում:

Սահմանադրական դատարանն էլ իր որոշման մեջ հստակ նշել է, որ միայն այն սկզբունքներն ու դրույթներն են համարվում Սահմանադրության մաս, որոնք կրկնվում են հենց Սահմանադրության տեքստում՝ օրինակ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը եւ այլն:

-Ադրբեջանական կողմից նաեւ խոսվում է «Ադրբեջանի փախստականների» վերադարձի մասին: Սա նախապայմա՞ն է:

-Ո՛չ, նման նախապայման չի եղել եւ չկա:

Նախ՝ ես չեմ մասնակցում պաշտոնական բանակցություններին, այլ ներգրավված եմ փորձագիտական քննարկումներում: Բայց նույնիսկ Ադրբեջանի նախագահը երբեւէ չի հայտարարել, որ սա խաղաղության պայմանագրի ստորագրման նախապայման է:

-Ի՞նչ պահանջներ ունի հայկական կողմը:

-Կարծում եմ՝ հենց այն բալանսավորված տեքստը, որն այսօր կա, արտացոլում է հայկական կողմի հիմնական պահանջները:

Այդ տեքստը հրապարակային է եւ ունի փոխադարձ բնույթ. կողմերը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, պարտավորվում են չմիջամտել միմյանց ներքին գործերին եւ պահպանել խաղաղ հարաբերությունները:

Դա կոմպրոմիսային փաստաթուղթ է, եւ հենց այդ բալանսն է եղել հայկական կողմի հիմնական պահանջը:

-Ի՞նչ թեմաներ են հիմնականում քննարկվում ադրբեջանցի փորձագետների հետ հանդիպումների ժամանակ:

-Քննարկվում են երկու հասարակություններին հուզող բոլոր հիմնական հարցերը: Դրանք են՝

- հումանիտար խնդիրները, հատկապես ռազմագերիների վերադարձը,
- սահմանազատման եւ սահմանագծման հարցերը,
- կոմունիկացիաների ապաշրջափակումը,
- կրթական համակարգերում եւ մեդիայում ատելության խոսքի նվազեցումը:

Մեզ համար շատ կարեւոր է ոչ միայն մեր դիրքորոշումը ներկայացնելը, այլ նաեւ հակառակ կողմի մտահոգություններն ու պատճառաբանությունները հասկանալը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՐԱՄ Ա-Ն ՀԱՆԴԻՊԵԼ Է ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի մեկին՝ Հայ Առաքելական եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն այցելել է Լիբանանի նախագահ Ժոզեֆ Աունին: Նրան ուղեկցել են Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահե արքեպիսկոպոս Փանոսյանը եւ Ս. Աթոռի դիվանապետ Տաճատ եպիսկոպոս Աշըգյանը:

Հանդիպումից հետո Արամ Ա-ն հանդես է եկել հայտարարությամբ, որում մասնավորապես ասված է, որ իր եւ տեղի Հայ համայնքի անունից զորակցություն է հայտնել Լիբանանի ներկայիս իշխանություններին՝ առաջնահերթ կարեւոր համարելով այն քայլերը, որոնք իրականացնում են լիբանանյան իշխանությունները պետության անկախության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության պահպանման եւ հեղինակության բարձրացման ուղղությամբ՝ հաշվի առնելով այն շրջադարձային ժամանակը, որում ապրում ենք ներկայումս:

Արամ Ա-ն դատապարտել է Իսրայելի կողմից Լիբանանի հարավում իրականացվող ռազմական գործողությունները եւ կոչ է արել միջազգային հանրությանն ու հատկապես՝ Լիբանանի բարեկամ երկրներին ուշադրության կենտրոնում պահել Լիբանանի խնդիրը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի հերթական նիստը: Այս մասին հայտնել են ՀՀ արդարադատության նախարարությունից:

«Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվել են՝

Գործադիր իշխանությանը վերաբերող կարգավորումները,

Սահմանադրության ընդունման, փոփոխության եւ հանրաքվեի վերաբերյալ կարգավորումները:

Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը ներկայացրել է իր կողմից հեղինակած՝ համացանցի հասանելիության իրավունքին վերաբերող կարգավորումները՝ ընդգծելով դրա կարեւորությունը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում եւ մարդու հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից:

Քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացրել են իրենց դիտարկումները, առաջարկություններն ու մասնագիտական գնահատականները՝ ուղղված ներկայացված նախագծերի կատարելագործմանը: Խորհուրդը շարունակում է իր աշխատանքները՝ նոր Սահմանադրության նախագծման ուղղությամբ»:

ՄԵՂԱԴՐԱՆՔ ՏՆՕՐԵՆԻՆ

2026 թվականի մարտի 23-ին հակակոռուպցիոն դատարան գործ է ստացվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեղադրանքով: Գործը մակագրվել է հակակոռուպցիոն դատարանի դատավոր Լեւոն Պետրոսյանին: Գործը քննվել է հակակոռուպցիոն կոմիտեում, գործը ստացվել է Գլխավոր դատախազությունից: Այս մասին տեղեկանում ենք Դատալեքս դատական-տեղեկատվական համակարգից:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ Նիկոլայ Թադեւոսի Նալբանդյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 1985 թվականի նոյեմբերի 15-ից մինչեւ 2021 թվականի հուլիսի 18-ը զբաղեցնելով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը եւ մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական եւ վարչատնտեսական գործառույթներ,հանդիսանալով հիշյալ կազմակերպության անունից հանդես գալու լիազորություններ ունեցող, իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2013 թվականի նոյեմբերի 1-ից մինչեւ 2021 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ից մինչեւ հաջորդ տարվա մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում կազմակերպել է իր քրոջ ամուսնուկ Լ.Հ.-ի կողմից «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ից վարձակալած տարածքում կառուցված եւ փաստացի իրեն ու Գ.Խ.-ին պատկանող «Այգի» սրճարան-ռեստորանի ջեռուցումը, սակայն դրա դիմաց որեւէ վճարում չի կատարվել: Մասնավորապես, 2013 թվականի հոկտեմբերի 17-ին «-Գավառի մանկատուն» ՊՈԱԿի տնօրեն Նիկոլայ Նալբանդյանի եւ ԱՁ Գ.Խ.-ի միջեւ կնքվել է մատակարարման պայմանագիր, ըստ որի ՊՈԱԿ-ը պարտավորվել է ջեռուցման սեզոնին՝ 2013 թվականի նոյեմբերի 1-ից 2014 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում, ամսեկան 20.250 ՀՀ դրամի, այսինքն՝ջեռուցման սեզոնի 4 ամիսների համար՝ ընդհանուր 81.000 ՀՀ դրամի դիմաց ապահովել «Այգի» սրճարան-ռեստորանի ջեռուցումը:

Նույն անձանց միջեւ նմանատիպ պայմանագիր է կնքվել նաեւ 2014 թվականի հոկտեմբերի 15-ին՝ 2014 թվականի նոյեմբերի 1-ից 2015 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում «Այգի» սրճարան-ռեստորանի ջեռուցումն ապահովելու համար՝ կրկին 81.000 ՀՀ դրամի դիմաց, սակայն նշված ժամանակահատվածում «Այգի» սրճարան-ռեստորանի կողմից չի վճարվել պայմանագրերով սահմանված՝ ընդհանուր 162.000 ՀՀ դրամը: Դրանից հետո Նիկոլայ Նալբանդյանը շարունակել է ապահովել «Այգի» սրճարան-ռեստորանի ջեռուցումը՝ 2015-2016, 2016-2017, 2017-2018, 2018-2019, 2019-2020, 2020-2021 թվականների ջեռուցման սեզոններին (յուրաքանչյուր տարվա նոյեմբերի մեկից մինչեւ հաջորդ տարվա մարտ ամիսը)՝ առանց համապատասխան պայմանագրի եւ վճարի, ինչի արդյունքում «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին պատճառվել է 648.000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս:

Նիկոլայ Նալբանդյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը: Գործը գտնվում է նախապատրաստական փուլում: Գործը վարույթ ընդունելու եւ դատական նիստեր նշանակելու որոշման մասին տեղեկություններ Դատալեքս համակարգում դեռեւս առկա չեն:

Նիկոլայ Նալբանդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ 441-րդ հոդվածի 1-ին մասով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՀՐԱՎԻՐԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Cyclingrace հեծանվավազքի կազմակերպիչները ՌԻԱ Նովոստիին հայտնել են, որ ուրախ կլինեն Փաշինյանին հրավիրել միջազգային կարգավիճակ ունեցող «Սադովոյե կոլցո» հեծանվավազքին: Այս հեծանվավազքն երկար եւ հարուստ պատմություն ունի. այն չի չեղարկվել նույնիսկ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Նշենք, որ այցի շրջանակում Մոսկվայում տեղի կունենա վարչապետ Փաշինյանի հանդիպումը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

ԿԱԼԱՆԱՎՈՐԵՑԻՆ

Սուրբ Աննա եկեղեցում Նիկոլ Փաշինյանի հետ միջադեպի մասնակից դպրոցական 18-ամյա Դավիթ Մինասյանը դատավոր Մնացական Մարտիրոսյանի որոշմամբ 2 ամսով կալանավորվեց: Մյուս եղբայրը՝ Միքայելը, ազատ էր արձակվել:

ՎԻՐԱՀԱՏՈՒՄ ԵՆ

Բաքվի գերությունից վերադարձած Վիգեն Էուլջեքչյանը վիրահատության է ենթարկվում: Այս մասին տեղեկացրել է նրա կինը՝ Լինդան: Նրա խոսքով՝ ընտանիքը մեծ հույսեր է կապում վիրահատության հաջող ելքի հետ եւ սպասում է դրական արդյունքի: Լինդան նշել է, որ այս կարեւոր պահին իրենց համար մեծ նշանակություն ունի մարդկանց աջակցությունն ու հոգեւոր զորակցությունը: Նա նաեւ դիմել է հանրությանը՝ խնդրելով աղոթել Վիգենի համար՝ ընդգծելով, որ նա արժանի է բոլորի ուշադրությանը, աջակցությանը եւ բարի ցանկություններին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձը Հայաստանի ասորական համայնքին՝ Հաբ-Նիսանի առիթով. «Հայաստանի Հանրապետության ասորական համայնքի հարգելի ներկայացուցիչներ, Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա՝ Հաբ-Նիսանի առիթով: Այս տոնը խորհրդանշում է բնության զարթոնքն ու պտղաբերությունը եւ ցանկանում եմ, որ այն ՀՀ քաղաքացի ասորիներին բերի ուրախություն, սեր եւ երջանկություն: Թող գալիք տարին ձեզ համար լինի արդյունավետ ձեռնարկների, հաջողությունների, լիության եւ բարեկեցության տարի: Հայաստանի Հանրապետության ասորական համայնքի սիրելի ներկայացուցիչներ, նաեւ ուզում եմ բոլորիդ շնորհակալություն հայտնել ձեր աշխատանքով մեր պետության զարգացմանն ուղղված ձեր ջանքերի, աշխատանքի եւ արարման համար: Շնորհավոր Հաբ-Նիսան»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Համլետ Սահակյանի 2024 թվականի հայտարարագիրը: Նշենք, որ Համլետ Սահակյանը ՊԵԿ նախագահի տեղակալի պաշտոնը ստանձնել է 2024 թվականի դեկտեմբերի 27-ին:

ArmLur.am-ը պարզեց, որ պաշտոնյան հայտարարագրել է մի շարք անշարժ գույքեր Երեւանում. նա ունի 2024 թվականի դեկտեմբերի 30-ին ձեռք բերված բնակարան (համատեղ սեփականություն), ինչպես նաեւ 2020 թվականին գնված եւս մեկ բնակարան (նույնպես համատեղ): Բացի այդ, նրա սեփականության մեջ են գտնվում 2016 թվականին նվիրատվությամբ ստացած հողամաս, անհատական բնակելի տուն եւ ավտոտնակ, որոնք գրանցված են միանձնյա:

Տրանսպորտային միջոցներից Սահակյանը հայտարարագրել է մեկ ավտոմեքենա՝ LEXUS մակնիշի, 2004 թվականի արտադրության, որը ձեռք է բերել 2018 թվականին:

Ֆինանսական տվյալների մասով ArmLur.am-ը ուսումնասիրեց, որ «Բայազետ քոնսթրաքշն» ՍՊԸ-ից ստացված փոխառությունից 2024 թվականի ընթացքում վերադարձվել է 32 մլն 816 հազար դրամ, իսկ տարվա վերջում փոխառության մնացորդը կազմել է 0 դրամ:

Բանկային հաշիվներում առկա միջոցները կազմել են 1,411 դոլար եւ 1 մլն 305 հազար 3 դրամ, իսկ կանխիկ միջոցները՝ 600 եվրո եւ 244 հազար դրամ:

Հայտարարագրված եկամուտը 2024 թվականին կազմել է 37 մլն 860 հազար 902 դրամ, որից 13 մլն 804 հազար 640 դրամը՝ աշխատավարձ «ՓԻ-ԷՅՋ-ՓԻ ՓԱՐԹՆԵՐՋ» ՓԲԸ-ից:

ArmLur.am-ը պարզեց նաեւ, որ պաշտոնյայի վարկային պարտավորությունները տարվա վերջի դրությամբ կազմել են 75 մլն 934 հազար 696 դրամ՝ կապված երկու բնակարանի ձեռքբերման հետ: Միեւնույն ժամանակ, վարկի մարման համար տարվա ընթացքում վճարվել է 10 մլն 968 հազար 334 դրամ:

Բացի այդ, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվել է 28,985 դոլար, որը համարժեք է ավելի քան 11 մլն դրամի:

Համլետ Սահակյանը նաեւ հանդիսանում է Հայաստանի աուդիտորների եւ փորձագետ հաշվապահների պալատի անդամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

14 ՎԻՐԱՎՈՐ

Առնվազն 14 մարդ վիրավորվել է առավոտյան ժամերին կենտրոնական Իսրայելի վրա մի քանի հրթիռային հարձակումների հետեւանքով: Այս մասին հայտնել է Իսրայելի ազգային շտապօգնության ծառայությունը:

Հայտարարության համաձայն՝ վիրավորների թվում է 11-ամյա մի աղջիկ: Նա ստացել է վերջույթների բեկորային վերքեր եւգտնվում է ծանր վիճակում: Եւս երկուսը՝ 36-ամյա կին եւ13-ամյա տղա, հոսպիտալացվել են միջին ծանրության վիճակում: Տասնմեկ մարդ թեթեւ վնասվածքներ է ստացել:

Ավելի վաղ հրթիռային սպառնալիքի պատճառով երկու ժամվա ընթացքում չորս անգամ հնչել է օդային տագնապի ազդանշանները կենտրոնական Իսրայելում, այդ թվում՝ Թել Ավիվում եւ նրա շրջակայքում: Իսրայելական բանակի տվյալներով՝ զինվորականներն արձանագրել են Իրանի տարածքից մի քանի հրթիռային արձակումներ:

ԱՄՆ–Ն ՀԱՐՎԱԾԵԼ Է

ԱՄՆ-ն հարվածել է Թեհրանում գտնվող իր նախկին դեսպանատան շենքին, հաղորդում է Mehr լրատվական գործակալությունը:

Ըստ լրատվականի՝ վնաս է հասցվել ոչ միայն նախկին ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությանը, այլեւ մոտակայքում գտնվող առեւտրային շենքերին: Ռմբակոծության հետեւանքով զոհերի մասին դեռեւս տեղեկություններ չկան:

ՀՐԹԻՌՆԵՐ ԵՆ ՊԱՅԹԵԼ

Երկու հրթիռ է պայթել Թեհրանում գտնվող Մոսկվայի պատրիարքարանի Սուրբ Նիկողայոսի տաճարից 150 մետր հեռավորության վրա: Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի տվյալներով՝ տաճարի հոգեւորականը չի տուժել:

«Ապրիլի 1-ի վաղ առավոտյան երկու բալիստիկ հրթիռներ են ընկել Իրանի մայրաքաղաք Թեհրանում գտնվող Մոսկվայի պատրիարքարանի Սուրբ Նիկողայոսի տաճարից 150 մետր հեռավորության վրա», - ասվում է գերատեսչության կայքում չորեքշաբթի օրը հրապարակված հայտարարության մեջ:

Գերատեսչությունը պարզաբանել է, որ պայթյունները տեղի են ունեցել ժամը 5:37-ին: Պայթյունի ալիքը պայթեցրել է գլխավոր մուտքի դարպասը, կոտրել եկեղեցու մեկ պատուհանը եւ կոտրել սրբապատկերի ապակին: Որոշ սենյակներում սվաղը փշրվել է:

«Պայթեցվել է եկեղեցու հոգեւորականի՝ վանահայր Վարլաամի (Դուլսկի) բնակության վայրի ապակե դուռը: Հայր Վարլաամը չի տուժել», - ասվում է հայտարարության մեջ:

ՀԱՐՎԱԾԵԼ Է ՆԱՎԹԱՏԱՐ ՆԱՎԻ

Իրանից արձակված թեւավոր հրթիռը հարվածել է Քաթարի տարածքային ջրերում գտնվող Qatar Energy պետական ընկերության կողմից վարձակալված նավթատար նավին, եւ անձնակազմը տարհանվել է, հայտնել է էմիրաթների պաշտպանության նախարարությունը:

«Չորեքշաբթի օրը Քաթարի պետությունը հարձակման է ենթարկվել Իրանից արձակված երեք թեւավոր հրթիռներով: Մեր զինված ուժերը հաջողությամբ որսացել են թեւավոր հրթիռներից երկուսը, իսկ երրորդ հրթիռը հարվածել է Qatar Energy-ի կողմից Քաթարի տարածքային ջրերում վարձակալված նավթատար նավին», - հայտնել է նախարարությունը սոցիալական ցանցերում:

Նախարարությունը հայտարարել է, որ «ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ առանց զոհերի տարհանելու 21 անձնակազմի անդամ ունեցող նավթատար նավը»:

ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀ

Քուվեյթի օդանավակայանում անօդաչու թռչող սարքի հարվածից հետո խոշոր հրդեհ է բռնկվել: Զոհերի մասին տեղեկություններ չկան, հաղորդում է Reuters-ը՝ հղում անելով երկրի պետական լրատվական գործակալությանը:

«Անօդաչու թռչող սարքի հարվածը խոշոր հրդեհ է առաջացրել Քուվեյթի օդանավակայանում: Զոհերի մասին տեղեկություններ չկան», - գրում է գործակալությունը:

Reuters-ը նաեւհաղորդում է, որ անօդաչու թռչող սարքերը թիրախավորել են Քուվեյթի օդանավակայանի վառելիքի բաքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գլխավոր դատախազությունը, «Դատախազության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, դատոնական կայֆէջում հրապարակել է Դատախազության 2025 թվականի գործունեության մասին:

Հաղորդման տասը բաժիններում ներկայացված են Դատախազության սահմանադրական լիազորությունների շրջանակներում 2025 թվականին կատարված աշխատանքները:

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հաղորդման նախաբանում, մասնավորապես, նշել է.

«Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ,

Հարգելի՛ գործընկերներ

Չորրորդ տարին է, որ պատիվ ունեմ Ձեզ ներկայացնելու Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության տարեկան հաղորդումը:

Հաղորդումը կառուցված է Դատախազության՝ որպես միասնական համակարգի՝ 2025 թվականի նպատակադրումների, կատարված հետեւողական աշխատանքի ու արձանագրված արդյունքների վրա:

Մասնավորապես՝

... 2025 թվականի ընթացքում Դատախազության բացառիկ՝ պետական եւ համայնքային շահերի պաշտպանության լիազորության շրջանակներում կայացված դատական ակտերով, ինչպես նաեւ դատախազական ներգործության միջոցների կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետության եւ համայնքների սեփականությանը կամ տիրապետմանն է վերադարձվել, նախնական գնահատմամբ, շուրջ 66 միլիարդ 934 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 124 գույք, այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ:

... 2025 թվականին օրինական ուժի մեջ է մտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով առաջին վճիռը:

... Նախաքննության ժամկետների նվազման՝ վերջին տարիներին արձանագրված միտումը պահպանվել է նաեւ 2025 թվականին. 2025 թվականին ավարտված քրեական վարույթների կեսից ավելին՝ 53,4%-ը, քննվել է մինչեւ 2 ամիս ժամկետում, ինչը 2024 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 11,3%-ով:

... Վերջին 8 տարիների միջինացված ցուցանիշների հետ համեմատությամբ՝ 2025 թվականին 2,5%-ով նվազել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու՝ դատարան ներկայացված միջնորդությունների տեսակարար կշիռը՝ մեղադրյալների ընդհանուր թվի համեմատությամբ:

... 2025 թվականին ավարտվել է 3495-ով կամ 9,2%-ով ավելի քրեական վարույթ, քան 2024 թվականին, այդ թվում՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 2807-ով կամ 23,8%-ով ավելի քրեական վարույթ:

... Քրեական վարույթներով, գործարկման օրվանից (2024 թվականի դեկտեմբերի 5) մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վերականգնված միջոցների միասնական հաշվին եւ Հարկ վճարողի միասնական հաշվին վճարվել է ընդհանուր 39 միլիարդ 895 միլիոն 845 հազար դրամ:

Դատախազության 2025 թվականի առաջնահերթությունը եղել է արդյունքահեն աշխատանքը՝ պայմանավորված 2025 թվականի մարտի 14-ին Դատախազության կոլեգիայի ամփոփիչ նիստում մարզերի եւ Երեւան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատման նոր չափանիշների սահմանմամբ, որոնք ամրագրվել են ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: Չափանիշները, ի թիվս այլնի, ներառում են՝

- Պետական եւ համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը եւ համայնքին վերջնական դատական ակտով վերադարձված գումարի չափը,

- Քրեական վարույթներով, ինչպես նաեւ դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական եւ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը,

- Ծանր եւ առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը,

- Ծանր եւ առանձնապես ծանր հանցագործություններով վերջնական դատական ակտերի թիվը:

Աշխատանքի արդյունքահեության պահանջը, դուրս գալով Դատախազության աշխատանքի ներքին չափանիշներից, 2025 թվականի արդյունքներով հանգեցրեց Դատախազության աշխատանքի նկատմամբ հանրային գնահատականի փոփոխության. համաձայն Միջազգային հանրապետական ինստիտուտի նախաձեռնությամբ Հայաստանում իրականացված հանրային կարծիքի՝ Դատախազության աշխատանքից «լիովին գոհ» եւ «ավելի շուտ գոհ» է ՀՀ քաղաքացիների 43%-ը: Նախորդ հարցման համեմատ՝ գոհունակության ցուցանիշն աճել է 6%-ով:

Սա, կարծում եմ, մեր՝ որպես միասնական համակարգի, կարեւոր նվաճում է, հավաստումն է այն պնդման, որ արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլեւ լինի տեսանելի ու հասկանալի:

Իմ երախտիքն եմ հայտնում դատախազներին, Դատախազության աշխատակիցներին եւ իրավապահ ու դատական համակարգերի բոլոր պրոֆեսիոնալ եւ սրտացավ գործընկերներին՝ 2025 թվականին գրանցած շոշափելի արդյունքի համար»:

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ

Երեւանի թիվ 94 մանկապարտեզի դիմաց բողոքի ակցիա է կազմակերպվել: Ծնողները պահանջում են տնօրենի՝ Փառանձեմ Միրիբյանի հեռացումը մեկուկես ամսյա պաշտոնավարման ժամանակահատվածում աշխատակիցների դժգոհության եւ աշխատանքից հեռացման պատճառով: Ծնողներից մեկը նշել է, որ դաստիարակները վախից եւ ճնշումներից դրդված ինքնակամ ազատման դիմումներ են ներկայացնել:

Նշվում է նաեւ, որ աշխատանքից ազատված աշխատակիցները փորձել են դիմել վարչական շրջանի պատասխանատուներին, սակայն խնդրին լուծում չի տրվել, եւ կարճ ժամանակում կազմակերպվել են հերթական ազատումները: Ծնողները դժգոհում են նաեւ, որ դաստիարակները չեն բարձրաձայնում խնդիրների մասին՝ պաշտպանելով իրենց վերադասին: Ըստ ներկայացված բողոքների՝ մանկապարտեզը շուրջ երկու ամիս փակ է եղել, իսկ երեխաների խնամքը կազմակերպվել է անկանոն պայմաններում: Ծնողները պնդմամբ՝ տնօրենը դաստիարակների հասցեին ոչ պատշաճ արտահայտություններ է արել:

Մանկապարտեզ են ժամանել Երեւանի քաղաքապետարանի եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչներ եւ ոստիկաններ: Տնօրենը թույլ չի տալիս մուտք գործել աշխատասենյակ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարտի 30-ին Լեմկինի փողոցի շենքերից մեկում հայտնաբերվել, ձերբակալվել եւ վարչություն է տեղափոխվել 33-ամյա մի երիտասարդ, որը հետախուզվում էր խոշոր չափերով թմրամիջոց իրացնելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարտի 30-ին Մասիս քաղաքի Հանրապետության փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել Խաչփար գյուղի բնակիչ 58-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

***

Համայնքային ոստիկանության Մուշի եւ Ճամբարակի բաժինների ծառայողների համատեղ բացատրական աշխատանքի շնորհիվ Մուշի բաժին է ներկայացել Գյումրի քաղաքի բնակիչ 29-ամյա մի երիտասարդ, որը 2025 թ. դեկտեմբերի 22-ից Ճամբարակի բաժնի կողմից հետախուզվում էր ապօրինի կերպով հրազեն կրելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ ամուսինը համատեղ կյանքի ընթացքում պարբերաբար ֆիզիկական ուժեղ ցավ եւ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառել կնոջը՝ նրան հասցնելով ինքնասպանության:

Բացի այդ, նախաքննության ընթացքում նաեւ պարզվել է, որ ամուսինը ապօրինի ձեռք է բերել եւ իր բնակության վայրում պահել ռազմամթերք հանդիսացող 38 հատ մարտական փամփուշտ:

Վերջինիս նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 162-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (ինքնասպանության հասցնելը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

● *Մարտի 30-ից 31-ը բացահայտվել է 136 հանցագործություն, որից 3 դեպք՝ սառը զենքի հայտնաբերման:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԻՐԵՆ ՄԵՂԱՎՈՐ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ

2025թ. նոյեմբերի 25-ից հակակոռուպցիոն քրեական դատարանում ընթանում է 2011-2019 թվականներին Իջեւանի քաղաքապետ, ներկայումս «Վարդմեգ» ՍՊԸ տնօրեն, 1973թ. ծնված Վարդան Ղալումյանի դատավարությունը: Նա մեղադրվում է այն բանում, որ զբաղեցնելով Իջեւանի քաղաքապետի պաշտոնը՝ Իջեւան քաղաքի Ուսանողական փողոցի 21 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից ավել օգտագործվող, հիշյալ անշարժ գույքին կից գտնվող, 1385 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ ճանաչել է հիշյալ քաղաքացու սեփականության իրավունքը, որն էական վնաս է պատճառել հասարակության եւ համայնքի օրինական շահերին: Սույն քրեական գործը քննվել է հակակոռուպցիոն կոմիտեում: Վ.Ղալումյանին մեղադրանք է առաջադրվել 2003թ. ապրիլի 18-ի ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 441 հոդվածի 1-ի մասին («Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը»): Վ. Ղալումյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Դատարանում Վ. Ղալումյանի շահերը պաշտպանում է փաստաբան Արթուր Մելիքբեկյանը: 2025թ. նոյեմբերի 25-ին կայացած դատական նիստում դատավոր Գիվի Հովհաննիսյանը որոշել է Վարդան Ղալումյանի նկատմամբ կիրառված «բացակայելու արգելք» խափանման միջոցին համակցված որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառել գրավը՝գրավի չափ սահմանելով 500 հազար ՀՀ դրամը: Մարտի 31-ին կայացած դատական նիստում Վ. Ղալումյանը հայտարարել է, որ ինքը իրեն մեղավոր չի համարում: Նա դատարանում հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ նշել է, որ քաղաքապետի պաշտոնը զբաղեցնելու համար բարձրագույն կրթություն չի պահանջվում, իսկ քաղաքապետարանում ընդունված որոշումները նախապատրաստվում են քաղաքապետարանի համապատասխան բաժիններիմասնագետների կողմից, իր հանդեպ քրեական հետապնդման հիմք հանդիսացած որոշումն ընդունվել է Իջեւան համայնքի ավագանու կողմից: Նա դատարանին առաջարկել է որպես վկա դատարան հրավիրել այդ որոշումն ընդունած Իջեւան համայնքի ավագանու անդամներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ «ՕՄԲՈՒԴՄԱՆԻ» ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օկուպանտ եւ ցեղասպան, արհեստածին, կեղծ կազմավորման՝ Ադրբեջանի, այսպես կոչված, մարդու իրավունքների հանձնակատարը 2026 թվականի մարտի 30-ին հայտարարել է, որ «...դատմության տարբեր փուլերում ադրբեջանցիները հայերի կողմից ենթարկվել են էթնիկ զտումների եւ ցեղասպանության նպատակաուղղված քաղաքականության: 1918 թվականի մարտ-ապրիլ ամիսների իրադարձություններն այդ քաղաքականության ամենաարյունալի եւ ամենաողբերգական դրսեւորումներից մեկն էին: Միջազգային կազմակերպությունները եւ ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է սկզբունքային դիրքորոշում ընդունեն ադրբեջանցիների դեմ իրականացված էթնիկ զտումների եւ ցեղասպանության մի շարք գործողությունների վերաբերյալ եւ 1918 թվականի իրադարձությունները ճանաչեն որպես ցեղասպանության ակտ»:



Առայժմ մի կողմ թողնենք այն հարցի քննարկումը, որ Ադրբեջանի նման բռնապետական երկրում չի հարգվում ու պաշտպանվում մարդու իրավունքը, էլ ուր մնաց, թե այդպիսի երկրում գոյություն ունենա մարդու իրավունքների հանձնակատար: Հետեւաբար, Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարն իրականում Իլհամ Ալիեւի հակահայկական քաղաքականության իրականացման գործում վերջինիս հանձնարարությունները կատարող հերթական պաշտոնյան է, ոչ ավելին:

Այժմ ըստ էության:

Նախ, պետք է նշել, որ մեջբերվածը կատարյալ սուտ է ու կեղծիք, որը չի ապացուցվում օբյեկտիվ, անաչառ ու արժանահավատ փաստերով: Իսկ իրականությունը հետեւյալն է: 108 տարի առաջ՝ 1918թ. սեպտեմբերի սկզբներին, Կովկասյան իսլամական բանակը Հայոց ցեղասպանության դահիճներից մեկի՝ Էնվեր փաշայի կրտսեր եղբոր՝ գեներալ-լեյտենանտ Նուրի փաշայի հրամանատարությամբ գրավել է Բաքուն եւ այնտեղ իրականացնել 30.000-ից ավելի հայերի կոտորած, այսինքն՝ ցեղասպանություն: 106 տարի առաջ՝ 1920 թվականի մարտի 22-ին, արհեստածին, կեղծ կազմավորման՝ Ադրբեջանի վարչակազմի կողմից սկսվել եւ չորս օր անընդմեջ՝ մինչեւ մարտի 26-ը ներառյալ, իրականացվել է հայոց հինավուրց բնակավայրերից մեկի՝ Շուշիի հայության ցեղասպանությունը: Այդ թվականին Շուշիում ապրում էր մոտավորապես 44.000 մարդ, որից մոտավորապես 24.000-ը հայեր էին, 20.000-ը՝ պարսիկներ, լեռնային մահմեդականներ եւ այլն: Իրականացված ցեղասպանության հետեւանքով հայերի թիվը կտրուկ նվազել եւ կազմել է մոտավորապես 5000 մարդ: Բաքվում եւ Շուշիում իրականացված հայերի ցեղասպանությունը ոչ միայն ոճրագործություն էր հայ ազգի նկատմամբ, այլեւ մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Առաջադեմ մարդկության կողմից այն մինչ օրս չի ստացել ոչ քաղաքական, ոչ էլ իրավական գնահատական, ինչը թույլ է տվել Ադրբեջանի բոլոր ժամանակների վարչակազմերին ձեւավորել եւ ինստիտուցիոնալացնել հայատյաց ու ցեղասպան գաղափարախոսություն՝ անարգել շարունակելով ցեղասպանական քաղաքականության իրականացումն

Ադրբեջանի տարածքում պատմականորեն ապրող հայերի եւ Արցախի բնիկ տեր հայության նկատմամբ: Հայ ազգի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ցեղասպանական քաղաքականությունը նկատի առնելով՝ ցեղասպանության ուսումնասիրության եւ կանխարգելման հարցերով զբաղվող համաշխարհային հեղինակավոր կազմակերպություններից մեկը՝ Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը, վերջերս միանգամայն իրավացիորեն Ադրբեջանին բնորոշել է որպես ցեղասպան պետություն: Այժմ Իլհամ Ալիեւի հանձնարարությունները կատարողի՝ Ադրբեջանի, այսպես կոչված, մարդու իրավունքների հանձնակատարի հիշատակած «ադրբեջանցի» ազգության մասին: Համաձայն անհերքելի փաստերի՝ մինչեւ 1936 թվականը երկրագնդի վրա գոյություն չի ունեցել «ադրբեջանցի» ազգություն: 1936թ. դեկտեմբերի 5-ին «Ստալինյան Սահմանադրության» ընդունման արդյունքում Խորհրդային Ադրբեջանի բնակչությունն, անկախ իր ազգային պատկանելիությունից (թալիշներ, լեզգիներ, ուդիներ, թաթեր, ցախուրներ եւ այլն), կոչվեց «ադրբեջանցի», որը բառացի նշանակում է մարդ, ով բնակվում է Ադրբեջանում: Սակայն, Ադրբեջանի վարչակազմը, «ադրբեջանցի» ասելով, հասկանում էր եւ այսօր էլ հասկանում է որպես ազգություն: Այսպիսով, պատմական-իրավական անժխտելի փաստերի համաձայն՝ Ադրբեջանի տարածքում ապրող տարբեր ազգային պատկանելիություն ունեցող էթնիկ խմբերի համար «Ադրբեջան» երկրի անունը 1936 թվականի վերջից սկսած դարձել է էթնոնիմ: 1918 թվականի դրությամբ «ադրբեջանցի» ազգություն գոյություն չունենալու եւ ապա 1936 թվականից «ադրբեջանցի» կոչվելու մասին վկայել է Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի համար, եւ ոչ միայն հանձնակատարի, պարտադրաբար կուռքի վերածված Հեյդար Ալիեւը նախքան 1995թ. նոյեմբերի 12-ին Ադրբեջանի Սահմանադրության ընդունումը մտավորականության ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որտեղ քննարկել են, թե ովքեր են իրենք եւ ո՞րն է իրենց լեզուն: Հանդիպմանը Հեյդար Ալիեւը, մասնավորապես, հայտարարել է. «Սկզբում մեզ անվանում էին թաթարներ, այնուհետեւ՝ 1918 թվականից հետո՝ թյուրքեր, 1936 թվականից՝ ադրբեջանցիներ: Ի՞նչ անել»:

Այսպիսով, 1918 թվականի դրությամբ ոչ միայն ներկայիս Ադրբեջանի տարածքում, այլեւ ողջ երկիր մոլորակի վրա գոյություն չի ունեցել «ադրբեջանցի» ազգություն: Հետեւաբար, 1918 թվականին հայերը չէին կարող եւ չեն ենթարկել ցեղասպանության գոյություն չունեցող «ադրբեջանցիներին»: Այս ամենի հետ միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային, պետական շահերը սպասարկելու հետագիծ, ցանկություն եւ կարողություն ունեցող վարչակազմի ձեւավորման պարագայում անհետաձգելիորեն պետք է ձեռնարկվեն գործուն քայլեր ի շարս Ադրբեջանի կողմից հայ ազգի նկատմամբ իրականացված բազմաթիվ հանցագործությունների, 1918 թվականին Բաքվում, 1920 թվականին Շուշիում, 1988 թվականին Սումգայիթում ու Գանձակում, 1990 թվականին Բաքվում, 1992 թվականին Արցախի Մարաղա գյուղում, 2020 եւ 2023 թվականներին Արցախի Հանրապետությունում Ադրբեջանի վարչակազմի կողմից պետական մակարդակով ծրագրված եւ իրականացված հայության ցեղասպանությունները միջազգայնորեն ճանաչելի դարձնելու եւ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Ստեփան ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ
քաղաքագետ

ԹՇՆԱՄԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՀԱՎԱՍՏԻ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը մարտի 31-ին հայտարարություն էր տարածել՝ կեղծ մեղադրանքներ ներկայացնելով, թե իբր «1918 թվականին հայկական խմբավորումները ցեղասպանություն են իրականացրել ադրբեջանցիների նկատմամբ»:

«Արմենպրես»-ի հետ զրույցում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության հայտարարությանն արձագանքել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

Հարց. Ի՞նչ մեկնաբանություն ունեք Ադրբեջանի ԱԳ նախարարության՝2026թ. մարտի 31-ի հայտարարության կապակցությամբ:

Պատասխան. Տասնամյակների պատմություն ունեցած հակամարտության ընթացքում ձեւավորվել են մի շարք թշնամական, ոչ հավաստի նարատիվներ, որոնք, ցավալիորեն, Ադրբեջանում դեռ շարունակվում են օգտագործվել նաեւ պետական մակարդակով: Հուսով ենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղությունը ոչ միայն կծառայի երկու պետությունների եւ հասարակությունների միջեւ կայուն խաղաղ համակեցության եւ բարիդրացիական հարաբերությունների ձեւավորմանը, այլեւ վերջ կդնի մտացածին թեզերի գոյությանն ու կբացառի ատելության խոսքը: Հիշեցնենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներն այս մասին նաեւ պայմանավորվածություն են ձեռք բերել Վաշինգտոնում, որտեղ 2025թ. օգոստոսի 8-ին ստորագրված հռչակագրի 5-րդ կետում հստակ խոսվում է երկու ժողովուրդների միջեւ թշնամանքի էջը փակելու եւ մարդկային անասելի տառապանքներ պատճառած հակամարտությունից հետո երկու ժողովուրդների համար բարիդրացիական հարաբերություններ սկսելու հնարավորության մասին:

● *Մարտի 30-ից 31-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 3 անհետ կորած:*

ԼՈՒՐԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Ապրիլի 1-ից Երեւանի Իսահակյան եւ Թամանյան փողոցների խաչմերուկում կկատարվի երթեւեկության կազմակերպման փոփոխություն: Այս մասին հայտնել են Երեւանի քաղաքապետարանից:

Մասնավորապես, նշված խաչմերուկում տեղադրված 3.1՝ «Մուտքն արգելվում է», 3.18.1՝ «Աջ շրջադարձն արգելվում է» ճանապարհային նշանները եւ 8.5.4՝ «Գործողության ժամանակ (11.00-24.00)» ցուցանակները ժամանակավորապես փակող ծածկոցները կհանվեն:

ԱՌԱՔԱՏԱՐ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՆ Է

2026թ. հունվարին Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառությունը կազմել է 1.28 մլրդ դոլար, ինչը 2025թ. համադրելի ցուցանիշի համեմատ նվազել է 174.3 մլն դոլարով կամ 12.02%-ով: Այս մասին փաստում են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները:

ՀՀ խոշորագույն առեւտրային գործընկերը շարունակում է մնալ Ռուսաստանը, վերոնշյալ ժամանակահատվածում երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը կազմել է 328.3 մլն դոլար: 2025թ. համադրելի ցուցանիշի համեմատ արձանագրվել է անկում 37.67%-ով կամ 198.4 մլն դոլարով:

Երկրորդը տեղում Չինաստանն է՝ 189.8 մլրդ դոլար, անկում՝ 4.92%: Եռյակը եզրափակում է ԱՄԷ-ն՝ 77.5 մլն դոլար, անկում՝ 44.16%:

Չորրորդ հորիզոնականում Իրանն է՝ 46.5 մլն դոլար, անկում՝ 4.04%: Հինգերորդ տեղում է Գերմանիան է՝ 49.7 մլն դոլար, աճ՝ 84.23%: Վեցերորդն ԱՄՆ-ն է՝ 43.3 մլն դոլար, աճ՝ 41.94%: Յոթերորդն Իտալիան է՝ 24.6 մլն դոլար, աճ՝ 1.09%: Ութերորդ հորիզոնականում Շվեյցարիան է՝ 23.8 մլն դոլար, աճ՝ 51.22%: Իններորդն Իրաքն է՝ 22.4 մլն դոլար, անկում՝ 8.59%: Տասնյակը եզրափակում է Բրազիլը՝ 19.3 մլն դոլար, աճ՝ 221.36%:

Ինչ վերաբերում է երկրների համախմբերին, ապա ԱՊՀ երկրների հետ առեւտուրն նվազել է 32.83%-ով եւ կազմել 371.5 մլն դոլար, որից ԵԱՏՄ երկրների հետ առեւտրաշրջանառությունը կազմել է 354.5 մլն դոլար, անկում՝ 34.53%:

ԵՄ երկրների հետ առեւտրաշրջանառությունն աճել է 15.97%-ով եւ կազմել 179.1 մլրդ դոլար, իսկ այլ երկրների հետ առեւտրի ծավալն նվազել է 2.35%-ով եւ կազմել 725.1 մլն դոլար:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՍԻՍԻԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է 39-ՐԴ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Ֆասթ Բանկը Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում օրերս բացել է իր 39-րդ մասնաճյուղը՝ ընդլայնելով իր ներկայությունը Հայաստանի մարզերում:

Նորաբաց Սիսիան մասնաճյուղը մարզում չորրորդն է, որտեղ հաճախորդներին առաջարկում են բանկային ծառայություններ՝ ապահովված ժամանակակից տեխնոլոգիական պայմաններով եւ հաճախորդակենտրոն սպասարկմամբ:

Ֆասթ Բանկի ՓՄՁ բիզնեսի կառավարման տնօրեն, տնօրինության անդամ Արտավազդ Թառոյանը վստահություն է հայտնել, որ նոր մասնաճյուղը նպաստելու է տարածաշրջանի զարգացմանը. «Մասնաճյուղում ստեղծված են լավագույն պայմաններն սպասարկելու համար ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրենց կարիքներին համապատասխան: Մենք առանձնահատուկ կարեւորում ենք ոչ միայն ծառայությունների որակը, այլ նաեւ ծառայությունների մատուցման հարմարավետությունն ու հասանելիությունը, ուստի Սիսիան մասնաճյուղը եւս գործելու է 24/7 ռեժիմով», - ասել է նա:

Ֆասթ Բանկը շարունակում է ընդլայնել իր մասնաճյուղային ցանցը՝ տեխնոլոգիական նորարարական լուծումները հասանելի դարձնելով նաեւ մարզերում: Բանկի մասնաճյուղերի առկայությունը նպաստում է մարզերի համաչափ զարգացմանը՝ Բանկը դարձնելով վստահելի գործընկեր ամբողջ Հայաստանում:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ՆՎԱԶԵԼ Է 73%-ՈՎ

«Ռոսնեֆտ»-ի զուտ եկամուտը 2025-ին նվազել է 73%-ով՝ մինչեւ 293 մլրդ ռուբլի՝ բարձր հարկերի, տոկոսադրույքների, պատժամիջոցների եւ շուկայի վատ պայմանների պատճառով: Եկամուտը կրճատվել է 18.8%-ով, EBITDA-ն՝ 28.3%-ով: Ընկերությունը բախվել է լոգիստիկ թանկացումների, ցածր նավթի գների եւ ուժեղ ռուբլու ազդեցությանը:

Չնայած համաշխարհային գների աճին, ծախսերի ավելացումը սահմանափակում է դրական ազդեցությունը:

ԱՎԻԱՎԱՌԵԼԻՔԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է

Իրանում ընթացող պատերազմը լուրջ ազդեցություն է ունեցել նաեւ Նիգերիայի վառելիքային շուկայի վրա: Arise News-ի տվյալներով՝ ավիացիոն վառելիքի գինը երկրում վերջին ամիսներին աճել է գրեթե երեք անգամ՝ Մերձավոր Արեւելքից մատակարարումների խափանումների ֆոնին: Եթե տարվա սկզբին մեկ լիտրի արժեքը կազմում էր մոտ 900 նայրա, ապա այժմ այն հասել է 2557 նայրայի:

Չնայած վառելիքի կտրուկ թանկացմանը՝ ավիատոմսերի գները Նիգերիայում աճել են զգալիորեն ավելի դանդաղ՝ մոտ 50%-ից պակաս: Մասնագետների խոսքով՝ ավիաընկերությունները փորձում են զսպել գների աճը՝ չկորցնելու հաճախորդներին, քանի որ բնակչության վճարունակությունը արդեն իսկ ցածր է:

Փորձագետները նշում են, որ Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակը արդեն ազդում է նաեւ այլ երկրների վրա՝ հատկապես Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Եթե հակամարտությունը Իրանում շարունակվի, վառելիքային ճգնաժամը կարող է տարածվել նաեւ Եվրոպայի եւ ԱՄՆ-ի վրա՝ դանդաղեցնելով համաշխարհային տնտեսության աճը եւ արագացնելով գլոբալ գնաճը:

ՀԱՆԴԻՊԵԼ Է ՔՆՆԻՉՆԵՐԻՆ

2026 թվականի ապրիլի 1-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը հանդիպել է նորանշանակ քննիչներին: Հանդիպմանը ներկա են եղել Քննչական կոմիտեի նախագահի տեղակալները, Տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետը եւ Երեւան քաղաքի քննչական վարչության պետը: Արթուր Պողոսյանը շնորհավորել է նորանշանակ քննիչներին՝ մաղթելով շարունակական առաջընթաց: Քննչական կոմիտեի նախագահը կարեւորել է նորանշանակ քննիչների հետ արդեն իսկ ավանդույթ դարձած հանդիպումները՝ ընդգծելով, որ այդ ձեւաչափը քննիչների համար լավ հնարավորություն է՝ ծանոթանալու ղեկավար անձնակազմի հետ:

Արթուր Պողոսյանը հանդիպման ընթացքում անդրադարձել է Քննչական կոմիտեի անձնակազմի համար սահմանված չափորոշիչներին՝ շեշտելով, որ քննիչների աշխատանքը միշտ տեսանելի է՝ սկսած կարգապահությունից մինչեւ քրեական վարույթների քննության որակ: Կարեւորելով քաղաքացիների բողոքների նկատմամբ հետեւողականությունը՝ Արթուր Պողոսյանը նորանշանակ քննիչներին հորդորել է քաղաքացիների հետ շփումներում լինել հարգալից, համբերատար՝ անկախ վերջիններիս կողմից բարձրացված հարցերի բովանդակությունից:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում պարզվել է, որ ՀՀ-ում գրանցված ընկերությունը թաքցրել է իր իրական շրջանառությունը եւ այն ամբողջությամբ չի ներառել ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվող հարկային հաշվարկներում, որի հետեւանքով թաքցվել եւ չեն վճարվել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Նախաքննության ընթացքում կատարված քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 200 մլն ՀՀ դրամը:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՆԵՐԿԱՅԱՑԱՎ ՆՈՐ ՊԱՏՄԱՎԵՊՈՎ

Մարտի 26-ին Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի ծննդյան 75-ամյակն էր եւ նրա հեղինակած «Գագիկ Երկրորդ» պատմաղաղափական վեպի շնորհանդեսը:

Տիգրան Պետրոսյանցը Մանկավարժականում աշխատում է արդեն 17 տարի: Հասարակական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից, մշակութաբան, մատենագետ, պատմաբան, լրագրող, ՀՀ բանակի պահեստի փոխգնդապետ, Դոնի կազակական միավորման գեներալ-մայոր, Մոսկվայի անվտանգության ակադեմիայի գեներալ-մայոր, նույն ակադեմիայի դոկտոր, Բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի լրագրողների միության անդամ Տիգրան Պետրոսյանցին շնորհավորելու էին եկել ոչ միայն մանկավարժականները, այլ Հայաստանի տարբեր բուհերի դասախոսներ, գիտական էլիտան, ուսանողներ, գրողներ, Նոր Նորքի «Համո Սահյանի անվան» գրադարանից:

Տ. Պետրոսյանցը հրատարակել է 67 գիրք ու գրքույկ, 100-ից ավելի գիտական հոդված: «Գագիկ Երկրորդ» պատմաքաղաքական վեպը Պիզու աքսորված վտարանդի թագավոր, շահնշահ Գագիկ Երկրորդ Բագրատունու մասին է, այն մասին, թե ինչպես առաջացավ Ռուբինյան հայկական թագավորությունը Կիլիկիայում, որի գաղափարը Գագիկ Երկրոդինն էր, որի մահով էլ ընդհատվեց նրա երազանքը: Վեպը գրված է հայ դասական պատմավեպի ավանդներով, վավերականը եւ գեղարվեստականը միահյուսված են:

Հեղինակը «Գագիկ Երկրորդ Բագրատունի» պատմավեպն ավարտել է 2009-ին, սակայն գրքի վերջաբանը գրվել է 2024-ին... Ճշմարտացի ու տպավորիչ պատմում է Բագրատունի վերջին արքա Գագիկ Երկրորդի մասին, որը դարձավ հայ դավաճան իշխանների խարդավանքի զոհը: Իհարկե, չպետք է մոռանալ, որ դավադրության հիմքը բյուզանդական կայսրերի՝ Հայաստանը նվաճելու քաղաքականությունն էր»: Նա նաեւ ներկայացրեց, թե ինչպես նախկին գրադարանը՝ «խրճիթը», Տ. Պետրոսյանցը փրկեց, դարձնելով օրինակելի միջավայր:

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, գրքի խմբագիր Էդիկ Գեւորգյանն ասաց. «Հայկական գիտական պատմության ողջ ընթացքի լուսաբանումը մշտապես արդիական հնչողություն ունի: Անկախ, ինքնիշխան Հայրենիքի կերտումը, պահպանումը յուրաքանչյուր հայի սրբազան եւ անքննելի պարտականությունն է: Միայն այն գիտակցումը կարող է տվյալ ժողովրդին հայտնություն, բարեկեցություն, անվտանգություն պարգեւի: Վեպում կարմիր թելի պես, հստակորեն ուրվագծվում են Բագրատունյաց վերջին արքայի, նրան շրջապատող ազատանի եւ անազատ խավերի կերպարներն ու գործերը: Վասպուրականից, Շիրակից, Կարսից, Արցախից եւ բազմաթիվ այլ վայրերից Կապադովկա-Կիլիկիա եկած հայոց մեծամեծերի փոխհարաբերությունները, գոյություն ունեցող պետական կառավարման համակարգն իր գործակալությունների ինստիտուտով եւ բազում այլ հիմնահարցեր: Չէ որ այդ ամենը, ի վերջո, հանգեցրին հեռավոր Կիլիկիայում հայկական իշխանությունների, այնուհետեւ 300-ամյա հայկական թագավորության հաստատմանը, որը կարեւոր դեր խաղաց հայության քաղաքական, մշակութային ու հոգեւոր կյանքում: Զմոռանանք, որ բուն Հայաստանում արդեն ինքնիշխան պետականությունը բացակայում էր»:

ԼԵՈՆԿԱՎԱԼՈՅԻ ՀՈՒՔԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ

Երեւանի օպերային թատրոնում կրկին հնչեց 19-րդ դարի վերջերին, իտալական արվեստում վերիզմի (իտալերենից թարգմանաբար՝ ճշմարիտ), ռեալիստական ուղղության օպերային արվեստի նշանավոր ստեղծագործություններից մեկը՝ Լեոնկավալոյի «Պայացները»: Վերջինս վերադարձավ բեմ՝ հանդիսատեսին ցնցելու մարդկային պարզ զգացմունքների՝ սիրո, խանդի եւ կրքի ուժով: Սա պարզապես պրեմիերա չէր, այլ սիրված բեմադրության երկար սպասված վերադարձ իր նյարդային երաժշտական գծի եւ պատկերավոր բեմական լեզվի բարձրարվեստ համադրությամբ:

Ներկայացումը վարող դիրիժորը, լարվածությունը կառուցել է բառացիորեն նախաբանի առաջին հնչյուններից, իսկ երգչախումբն ու նվագախումբը կինեմատիկական խտություն եւ շունչ են հաղորդում գործողությանը: Ժամանակակից ռեժիսուրայով այս բեմադրությունը պահպանում է դասական սյուժեն թափառող կատակերգուների թատերախմբի հետ, բայց շեշտը դնում է թատրոնի վրա. դիմակները, կուլիսները եւ լույսը դառնում են լիիրավ կերպարներ, որոնք արտացոլում են հերոսների գերլարված հոգեբանական գծերը: Տեսողական գնահատականը՝ կտրուկ հակադրություններ, սերտ պլաններ, խիտ անսամբլներ, ուժեղացնում է անխուսափելիության զգացումը, երբ տեսարանն ու իրականությունը միաձուլվում են մահացու եզրափակչում: Մեներգիչները ցույց են տալիս հազվագյուտ հուզական անկեղծություն. հայտնի Vesti la giubba-ն հնչում է ոչ թե որպես պարտիա, այլ որպես հուսահատության ճիչ մի մարդու, որը դատապարտված է վերքերը թաքցնել դիմահարդարմամբ: Նվագախմբի առաձգական պուլսացիան ընդգծում է մեղեդիների նյարդը, իսկ տեմբրերի հետ նուրբ աշխատանքը ի հայտ է բերում քնարական տեսարանների փխրուն վիճակը: Այս ամենով հանդերձ, «Պայացների» վերադարձը հաստատում է Երեւանի օպերայի հեղինակությունը՝ որպես թատրոնի, որը կարողանում է խոսել այսօրվա լեզվով՝ հավատարիմ մնալով նոր ոճին ու աղբյուրին միաժամանակ:

Լեոնկավալոյի «Պայացները» կայացավ Երեւանի եւ Միլանի «Լա Սկալա» օպերային թատրոնների միջեւ ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում. Երաժշտական ղեկավար եւ դիրիժոր, մաեստրո Կարեն Դուրգարյան, դիրիժոր Հարություն Արզումանյան, բեմադրող ռեժիսոր եւ լուսային նկարիչ Մարիո Ակամպա, ռեժիսորի օգնական եւ պարերի բեմադրող Արա Ասատուրյան, բեմի նկարիչ Էլեոնորա Պերոնետի, բեմի նկարչի օգնական Պիերֆիլիպո Տորտորա, երգչախմբի ղեկավար Նարինե Ոսկանյան, մանկական երգչախմբի ղեկավար Էմմա Առաքելյան, Զգեստների նկարիչ Զիարա Ամալտեա Չիարելի, իտալերենի մասնագետ Զոյա Տուխմանովա, ներկայացումը վարող ռեժիսոր Անժետա Պոտոսյան, եւ, իհարկե, մեներգիչների՝ օպերային աստղերի երեք կազմ: Իսկ 93-ամյա Երեւանի օպերային թատրոնում «Պայացները» առաջին անգամ բեմադրվել է հատվածաբար՝ 1935թ. ռեժիսոր Ալեքսանդր Կարատով, դիրիժոր Միքայել Թավրիզյան: Առաջին ամբողջական բեմադրությունը՝ 1937թ.,ռեժիսոր Արշակ Բուրջալյան, դիրիժոր Յուրի Յաղուբյան, հետագա տարիներին այս օպերային անդրադարձել են եւս 4 անգամ, վերջինը՝ 2021թ. ռեժիսոր Ռուբեն Քոչար, դիրիժոր Մկրտիչ Բաբաջանյան:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ 100–ՅԱԿՈՒՄ Է

ՖԻԴԵ-ն ներկայացրել է մարտ ամսվա լավագույն շախմատիստների դասակարգման աղյուսակը:

Լավագույն 100-յակում հայ շախմատիստների համար դրական փոփոխություններ են տեղի ունեցել: Շանթ Սարգսյանը 2647 միավորով 69-րդն է: Աղյուսակ է վերադարձել Հայկ Մարտիրոսյանը, որը 2633 միավորով 92-րդն է, իսկ 96-րդը՝ Արամ Հակոբյանը (2631):

Կանանց աղյուսակում Հայաստանը 3 ներկայացուցիչ ունի: Էլինա Դանիելյանը 45-րդն է (2399), Մարիամ Մկրտչյանը բարձրացել է 69-րդ տեղը (2368), իսկ Լիլիթ Մկրտչյանը՝ 74-րդ (2366):

Վարկանշային աղյուսակների առաջատարները Մագնուս Կարլսենն(2840) ու Հո Յիֆանն (2599) են:

ՀԱՅՏՆԻ Է

Կայացել են Ազգերի լիգայի անցումային խաղերը եւ հայտնի են դարձել թիմերի անունները, որոնք կշարունակեն պայքարը: Լատվիայի ընտրանին 1:0 հաշվով առավելության է հասել Ջիբրալթարի նկատմամբ ու համալրել C լիգայի 2-րդ խումբը: Այստեղ են նաեւ Մոնտենեգրոյի, Հայաստանի եւ Կիպրոսի հավաքականները: Ազգերի լիգայի մեկնարկը տրվելու է այս տարվա սեպտեմբերին:

Մինչ այդ Եղիշե Մելիքյանի թիմը Երեւանում երկու ընկերական հանդիպում ունի: Հունիսի 6-ին հայ ֆուտբոլիստները կընդունեն Ղազախստանի, իսկ 9-ին՝ Մոլդովայի թիմերին:

ԽՆԴՐԵԼ Է ՉՀԵՌԱՆԱԼ

Աշխարհի առաջնության որակավորման փլեյ-օֆֆի եզրափակիչում Իտալիայի հավաքականի պարտությունից եւ եզրափակիչ մրցաշարի ուղեգիր չնվաճելուց հետո Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գաբրիելե Գրավինան խոսել է ազգային թիմի գլխավոր մարզիչ Ջենարո Գատուզոյի ապագայի մասին:

«Ես Գատուզոյին խնդրել եմ չհեռանալ պաշտոնից եւ շարունակել աշխատանքը թիմի հետ»,- Գրավինայի խոսքը մեջբերում է x.com/FabrizioRomano-ն:

Իտալիան հետխաղային 11-մետրանոցներով 1:4 հաշվով պարտվել էր Բոսնիա եւ Հերցեգովինային: Հիմնական ժամանակն ավարտվել էր 1:1 հաշվով: Լրացուցիչ ժամանակում գոլ չէր գրանցվել:

Աշխարհի քառակի չեմպիոն Իտալիան առաջին անգամ երեք անընդմեջ առաջնություն է բաց թողնում: Նախորդ անգամ իտալացիները մասնակցել են 2014-ին Բրազիլիայում անցկացված աշխարհի առաջնությանը:

● *Խամաճիկների պետական թատրոնում ապրիլի 3-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Հույսի աստղ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Պարտադանին դատի էի տվել, բայց որոշել են հաշտվել. ինչպե՞ս է ձեւակերպվում հաշտությունը:
Սարգիս Գաբրիելյան, 40 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Դատավարության ցանկացած փուլում դատավարության մասնակիցները կարող են կնքել հաշտության համաձայնություն եւ վեճն ավարտել հաշտությամբ: Այն պետք է ձեւակերպվի գրավոր, ստորագրվի գործին մասնակցող անձանց կողմից եւ ներկայացվի դատարանի հաստատմանը: Դատարանը հաշտության համաձայնությունը քննարկում է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ: Նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը դատական նիստի ժամանակ Ձեզ կպարզաբանի դրա կնքման հետեւանքները: Հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ, որը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից մեկամսյա ժամկետում: Հարկ է նշել, որ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե

1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին,

2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը,

3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել,

4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

Հաշտության համաձայնությունը վերոնշյալ հիմքերով դատարանի կողմից չհաստատվելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, որի մասին կայացնում է արձանագրային որոշում: Հաշտության համաձայնություն կնքելիս Դուք պետք է անդրադառնաք նաեւ դատական ծախսերի բաշխմանը, այդ թվում՝ նաեւ ներկայացուցիչների ծախսերի հատուցման հարցին: Դատական ծախսերի մեջ են ներառվում Ձեր կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, փաստաբանին վճարված վարձատրության գումարը, նամակագրության հետ կապված ծախսերը եւ այլ ծախսեր, որոնք ուղղակի առնչություն ունեն գործի հետ: Եթե հաշտության համաձայնությամբ դատական ծախսերը բաշխելու հարցը չկարգավորեք, ապա դատարանը հաշտության համաձայնություն կնքած անձանցից դատական ծախսերը կբռնագանձի հավասարաչափ:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշտության համաձայնությունը ձեւակերպելիս անհրաժեշտ է դրանում նշել Ձեր եւ մյուս կողմի անձնագրային տվյալները, քաղաքացիական գործի համարը, որի շրջանակներում կնքում եք հաշտության համաձայնությունը, որից հետո մանրամասն պետք է շարադրել այն պայմաններն ու դրույթները, որոնց շուրջ եկել եք համաձայնության:
ՀՀ դատական իշխանություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Տեղեկատվության տնօրինողը մերժել է տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով, որ դա նպատակահարմար չէ: Դա օրինակա՞ն է:
Աննա Արզումանյան, 31 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Ձեր տեղեկատվության հարցումը ստանալով՝ տեղեկության տնօրինողը այն չի տրամադրել՝ պատճառաբանելով, որ դրա տրամադրումը կարող է անհարմարություն ստեղծել կամ լինել ոչ նպատակահարմար, ապա այդպիսի մերժումը անօրինական է եւ չպատճառաբանված: Պետք է հիշել, որ տեղեկատվության տնօրինողն իրավունք ունի մերժել տեղեկատվության տրամադրումը բացառապես օրենքով սահմանված հիմքերով, որոնք հետեւյալ հինգն են.

1) տեղեկատվությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) տեղեկատվության տրամադրումը կարող է խախտել մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) տեղեկատվությունը պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.

4) տեղեկատվության տրամադրումը բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) տեղեկատվության տրամադրումը խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Բացի վերոնշյալ հիմքերից, տեղեկատվության տնօրինողը որեւէ այլ պատճառաբանությամբ իրավասու չէ մերժել տրամադրել տեղեկատվությունը: Ավելին, հստակ է այն կարգավորումը, համաձայն որի՝ տեղեկատվության տնօրինողը չի կարող մերժել տեղեկատվության տրամադրումը, եթե այն լրացուցիչ դժվարություններ է ներկայացնում իր համար կամ ստեղծում է անհարմարություններ: Այս կարեւոր սկզբունքը ապահովում է վարչական մարմինների կամայականությունների բացառումը: Բացի այդ, տեղեկատվության տնօրինողը պարտավոր է իր մերժման մեջ հողում կատարել օրենքի այն նորմին, որի հիմքով մերժում է տրամադրել տեղեկատվությունը: (շարունակությունը՝ հաջորդ համարում)
Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Խոշոր հրդեհ Երեւանում՝ Նորք-Մարաշում. կրակն ու ծուխը տեսանելի էին մի քանի կմ-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 3 + 1 + 6 + 11
	Կոտայքի լեռներ	0 - 2 + 6 + 10
	Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +12 + 14
	Գեղարքունիք	0 - 3 + 5 + 10
	Լոռի	- 1 + 3 + 11 + 16
	Տավուշ	0 + 3 +12 + 16
	Արագածոտնի լեռներ	0 - 3 + 5 + 9
	Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 5 +11 + 15

	Արարատ	+ 3 + 6 +13 + 16
	Արմավիր	+ 4 + 8 +16 + 18
	Վայոց ձորի լեռներ	0 - 2 + 5 + 9
	Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 7 + 15 + 18
	Սյունիքի լեռներ	0 - 6 + 3 + 8
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +13 + 17
	Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +18 + 22
	Երեւան	+ 5 + 7 +15 +17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **01.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*